

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Չեռնոց :

ՉԵՌՆՈՅԻՆ գործածութիւնը շատ հին է . առջի բերան հաստ կաշիէ շինած ձեռնոցներ կը գործածէին . և աւելի գեղացիները կը դնէին աս ձեռնոցը՝ որպէս զի փուշերը ձեռուրնին չըխայթէ . բայց ետքը սկսան ձեռուրնին ցրտէն պահելու համար ձեռնոց գործածել : Չեռնոց գործածելը եկեղեցակա նաց մէջ ալ մտաւ միջին դարու մէջ . ինչուան պատարագի ատեն ալ ձեռնոց կը դնէին . իսկ ընդ հակառակն դատաստանարանի մէջ ձեռնոցով դատաստան կտրել չէր ըլլար :

Որտի աման :

ՈՐՄԵՆԻՆ հին ոտքի ամանը կ'երևնայ թէ տրեխն էր՝ . ասոր գործածութիւնը Ղարախանու ատենէն՝ ի վեր կար : Յոյները հողաթափ՝ կը հագնէին՝ բայց միշտ չէ , հապա միայն տնէն դուրս ելլելու ատեն . բայց աս հողաթափին ձևը յայտնի չէ . իրենց մէջ էրիկ մարդիկ եզան կաշիէ շինած երկայն պարանոցով կօշիկ ալ կը հագնէին : Հին ատեն կանանց ոտքի ամանը կամ հողաթափ կամ տրեխ էր կապով . բայց այլ և այլ նիւթերէ և տեսակ տեսակ ձևերով : Ազիպտացիք պապիր ծառին կեղևէն իրենց ոտքի ամանը կը շինէին : Իկուրգոս Սպարտացուց օրէնսդիրը օրէնք հանեց որ բոսիկ ոտքով քալեն . ուստի ոտքի աման չէին գործածեր ինչուան որ քսանը հինգ կամ երեսուն տարուան ըլլային ու հարկադրէին որսի կամ պատերազմի երթալու : Ըս Սպարտացուց գործածած ոտքի ամանը հողաթափ մըն էր՝ բոլոր մէկալ : Յունաց գործածածներէն տարբեր . ընդհանրապէս կարմիր կաշիէ կը շինէին և առանց զարդի : Սպարտացուց կանանց

1 Չորտի : 2 Փայտած, քանդակած :

ոտքի ամանն ալ երկայն վիզով կօշիկի կը նմանէր : Ղարա բերան հողաթափից ալ Յունաց նայելով ոչ գեղերը և ոչ քաղքի մէջ ոտքի աման կը գործածէին . բայց վերջերը իրենց մէջն ալ մտաւ : Բայց հողաթափեցուց հասարակապետութեան ատեն ալ հին ատենի սովորութիւնը սիրողք բոսիկ ոտքով կը քալէին : Իտալիայի մէջ հին ատեն մեռած մարդու մը մարմինը գտնուեցաւ և դեռ ոտքի ամանները ամբողջ էին . նիւթն էր կարմիր կաշի , իսկ ոտքի ամանին տակը փայտէ էր . այնպէս աղէկ շինած էր ոտքին ու մատուրներուն յարմար՝ որ ձախ ոտքինը աջ ոտքին չէր ըլլար և ոչ աջ ոտքինը ձախ ոտքին , բուծ մատին կողմը սաստիկ սուր ըլլալուն : Փիլիպպոս Վեղեցկին թագաւորութե ատեն նոր տեսակ ոտքի աման մը հնարեց մէկը որ իրեն անունովը Փոռնի ըսուեցաւ . ասոր ծայրը ամէն մարդուն իրեն աստիճանին յարմար երկայն է . իշխանաւոր մարդոցը երկու ոտք երկայն , հարուստներունը մէկ ոտնաչափ , և կէս ոտնաչափ հասարակ մարդկանց : Արքեմն աս ոտքի ամանին վրայ եղջիւրի , աղեղան , և կամ ուրիշ այլանդակ ձևերով զարդեր կը շինէին : Փիլադելփիացիին մէկը տեսակ մը ոտքի աման հնարեց , որուն ներքանը փոխանակ քովի կաշիին հետ դերձանով կարած ըլլալու՝ երկաթէ կամ պղնձէ գամերով չորս դիէն գամած էր , որոնց ծայրը ներսէն ծռած էր . և աս գամերը անանկ շարած էր որ աչքի ալ աղուոր կ'երևնար . ներքանը աս կերպով գամած ըլլալուն , կոխելու ատեն գամերը գետնին գալով , ոտքի ամանը երկայն կը դիմանայ : Ըս կերպս հիմայ հասարակ եղած է :

Գօտի :

ԳՕՏԻՈՅ գործածութիւնը խիստ հին է : Բրևելցիք լայն գօտի՝ և վերջը աւելի կամարածե գօտի կը գործածէին , անոր համար իրենց մէջ կամար կ'ըսուի գօտին : Իսրայէլացիք զատկա



կան ոչխարը ուտելու ատեն մէջքերնին գօտի կը կապէին, և իրենց քահանայապետն ալ զո՛հ ընելու ատեն միշտ գօտի մը մէջքը կը կապէր : Յոյնք և հռովմայեցիք ալ գօտի կը կապէին : Ընոնք որ ողիմպիական խաղերուն մէջ ստրկի համար իրարու հետ ձեռքով կը կռուէին, գօտիով աղէկ մը զիրենք կը փաթթէին . բայց վերջը վազողները տեսնալով որ գօտին իրենց արգելք մըն է՝ մէկդի ձգեցին : Աբրուպայի մէջ ալ գօտուոյ գործածութիւնը հասարակ էր, բայց որովհետեւ երկայն ու լայն զգեստներ հագնելու սովորութիւնը դադարեցաւ, և նեղ ու կարճ վերարկուներ գործածել սկսան, գօտի կապելու սովորութիւնը իշխաններու, եկեղեցականաց և կրօնաւարաց և կնիկ մարդկանց միայն մնաց . և իրենց մէջ մեծ նախատինք էր մէկը գօտիէն զրկելը : Ըն վաճառականները որ ունեցածնին կորսնցընելով պարտքերնին չէին կրնար վճարել, նոյնպէս ուրիշ պարտատէրներն ալ գօտիէն կը զրկուէին : Ըստ սովորութեան պատճառն աս է որ, հին ատեն Աբրուպայիք իրենց գօտիէն քսակ մը և բանիւքներ կը կախէին . որով գօտին նշան կ'ըլլար իրենց ինչ վիճակի կամ պաշտօնի տէր ըլլալուն, և թէ որ աս գօտիէն զրկուէին՝ իրենց խեղճութիւնը կ'իմացուէր : Ըրևեցոց մէջ ալ նոյնպէս նախատինք էր անգօտի ըլլալը, իբրև նշան թոյլ և տկար մարդու, վասն զի գօտին կտրճութեան նշան էր :

Սուրբ Գաղղիոյ Թագաւորը տէրութեան մէջ անզգամ կնիկները քիչցընելու համար՝ հրաման հանեց որ կնիկ մարդիկ ոսկեզօծ գօտի գործածեն . բայց առանձին հրովարտակով պարկեշտ կանանց ապսպրեց որ իրենք չգործածեն . ասկից առաջ եկաւ աս առակը,

Ըլ աղէկ է անուն բարի  
Ըլ ան ոսկեզօծ ազուոր գօտի :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԶՍՓԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Խորանարդ չափ :

ԸրԳԻՆ օրագրիս այս տարուան թերթերուն մէկուն մէջ քառակուսուոյ վրայ խօսուած ըլլալով՝ կարծեմ ընթերցողաց անհաճոյ չըլլար թէ որ քանի մը խօսք ալ խորանարդի վրայ զրուցենք, և խորանարդ մեր, խորանարդ որք, և այլն ըսուածները ինչ են քիչ մը բացատրենք :

Արկրաչափութեան մէջ խորանարդ կ'ըսուի այն ձևը կամ հաստատուն մարմինը՝ որ վեց քառակուսի հաւասար կողմունք կամ երես ունի : Ըյս ձևին առմէնուն ընտանի օրինակ մըն է նարտի քուէն<sup>1</sup>, որ ինչպէս ամէնքը գիտեն՝ վեց քառակուսի հաւասար կողմունք ունի . որոնցմէ մէկը թէ որ խարխիս սեպելու ըլլանք, չորսը կողմունք կ'ըլլան, վեցերորդն ալ խարխիսն հակադիր : Ըյս վեց հաւասար քառակուսիներս քուէին կամ խորանարդին երեսներն են, և այս քառակուսիներուս որ և իցէ կողմ մը խորանարդին ալ կողմն է : Ըսկէ ինքն իրեն կը հետեւի բնականապէս որ եթէ որ և իցէ քառակուսուոյ մը կողմը գիտնանք կրնանք նաև անկէ ելած խորանարդին ալ չափը իմանալ ու ձևացընել : վասն զի նոյն կողմով քառակուսի մը կը ձևացընենք որուն չորս կողմունքն ալ մէկմէկու հաւասար են . այս քառակուսին ուզած խորանարդիս խարխիս դնելով՝ չորս հաւասար կողմանցը վրայ իրեն նման չորս քառակուսիներ ալ կը բարձրացունենք՝ որ խորանարդին կողմունքը կ'ըլլան, ասոնց վրայ վեցերորդ քառակուսի մըն ալ աւելցընելով՝ ելած ձևը կ'ըլլայ ուզած խորանարդին : Աստի խորանարդը շատ պարզ ձև ըլլալուն, և երբոր կողմը ծանօթ է՝ ամէն մարդ

1 Տես երես 184 :

2 Չար Թալուսի :